

Ավանդի ընդունման պայմաններն են՝

| | |
|--|---|
| Ավանդի արժույթ | ՀՀ դրամ, ԱՄՆ դոլար |
| Սկզբնական ներդրվող նվազագույն գումար | 10,000 ՀՀ դրամ, 100 ԱՄՆ դոլար |
| Ավանդի տեսակ | Ավելացման իրավունքով ժամկետային ավանդ |
| Ավանդի ժամկետ | Նվազագույնը՝ 5 տարի Ժամկետը սահմանվում է այնպես, որ ավանդի ժամկետի ավարտի դրությամբ ավանդատուի տարիքը կազմի 14 - 18 տարեկան ներառյալ |
| Տոկոսների վճարում | Ժամկետի վերջում Եռամսյակը մեկ անգամ հաշվարկված տոկոսները հաշվեգրվում են ավանդի մնացորդին |
| Բռնու՝ Ավանդի փաստացի օրերի քանակ՝ բաժանած 365, բազմապատկած ավանդի միջին օրական մնացորդով, բազմապատկած 5 տոկոսային կետով | |

Ավանդի տարեկան պարզ տոկոսադրույք և տոկոսային եկամտաբերություն

| Արժույթ | Պարզ տոկոսադրույք | Տոկոսային եկամտաբերություն ² |
|-----------|--|---|
| ՀՀ դրամ | (ԿՔԼՏ ¹ + 3.27)%, ներկա պահին՝ 11.86% | 12.4% |
| ԱՄՆ դոլար | (ԿՔԼՏ + 4.67)%, ներկա պահին՝ 5% | 5.09% |

Ծանոթագրություններ

¹ ԿՔԼՏ - «Կոնվերս Բանկ» ՓԲԸ Լողացող Տոկոսադրույք: Սահմանվում է Բանկի կողմից տարեկան երկու անգամ՝ հիմք ընդունելով հիմնական ցուցանիշները, իսկ վերջիններիս անհասանելիության դեպքում՝ երկրորդային ցուցանիշները: Փոփոխման դեպքում գործող պայմանագրերի պարզ տոկոսադրույքը փոփոխվում է ոչ շուրջ, քան ավանդատուին այդ մասին տեղեկացնելուց մեկ ամիս հետո:

Հիմնական ցուցանիշներ. ՀՀ դրամի դեպքում՝ ՀՀ պետական 180-օրյա զեղչադրույքային պարփակման եկամտաբերության կորի տոկոսադրույքը, որը հրապարակվում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից <https://www.cba.am> ինտերնետային կայքում: ԱՄՆ դոլարի կամ Եվրոյի դեպքում՝ համապատասխանաբար "ԱՄՆ դոլար 6-ամսյա ICE LIBOR" և "Եվրո 6-ամսյա ICE LIBOR" բենչմարկները, որոնք հրապարակվում են Intercontinental Exchange (ICE) (Ինտերկոնտինենտալ էքսչենջ (ICE)) կազմակերպության կողմից <https://www.theice.com> ինտերնետային կայքում:

Երկրորդային ցուցանիշներ. ՀՀ դրամի դեպքում՝ ՀՀ ԿՔԼ կողմից սահմանվող վերաֆինանսավորման տոկոսադրույքը: ԱՄՆ դոլարի դեպքում՝ ԱՄՆ Ֆեդերալ Ռեզերվ բանկի կողմից սահմանված Federal funds-ի տոկոսադրույքը կամ միջակայքի վերին շեմը: Եվրոյի դեպքում՝ Եվրոպական կենտրոնական բանկի Marginal lending facility-ի տոկոսադրույքը:

Ընդ որում՝ հիմնական ցուցանիշների հասանելիության անհնարինության և երկրորդային ցուցանիշների կիրառման դեպքում երկրորդային ցուցանիշների հիման վրա սահմանված ԿՔԼՏ-ներով ավանդների պարզ տոկոսադրույքները սահմանվում են այնպես, որ ավանդի տոկոսադրույքի հաստատված բաղադրիչի փոփոխության պայմաններում պարզ տոկոսադրույքի մեծությունը մնա անփոփոխ:

Սահմանված ԿՔԼՏ տոկոսադրույքները հրապարակվում են Բանկի պաշտոնական ինտերնետային կայքում <https://conversebank.am/hy/kbht/> հասցեով և հասանելի են Բանկի տարածքում:

Այս ավանդի լողացող տոկոսադրույքը Բանկի կողմից կարող է փոփոխվել ոչ ավելի հաճախ, քան տարին երկու անգամ: Լողացող տոկոսադրույքի բարձրացման և իջեցման առավելագույն շեմը սահմանվում է +/- 4 տոկոսային կետ: ԿՔԼՏ-ների մեծությունը կարող է կլորացվել մինչև մեկ հարյուրերորդական:

² Հաշվարկվել են՝ հիմք ընդունելով ամփոփագրի թարմացման ամսաթվի դրությամբ գործող ԿՔԼՏ մեծությունները. ՀՀ դրամ՝ 8.59%, ԱՄՆ դոլար՝ 0.33%:

Ուշադրություն

Վճարման ենթակա տոկոսներից գանձվում է եկամտային հարկ
ՀՀ տարածքում ներդրված ավանդների դեպքում՝ 10%
ԱՀ տարածքում՝ 5%

Անկանխիկ մուտքագրված ավանդի գումարի կանխիկ վերադարձի դեպքում կգանձվի միջնորդավճար
ՀՀ դրամ՝ 0.25% / ԱՄՆ դոլար՝ 0.40%

Ամփոփագրում նշված պայմանները կարող են փոփոխված լինել:

Հավելյալ տեղեկատվության համար կարող եք կապ հաստատել Բանկի հետ:

«Կոնվերս Բանկ» ՓԲԸ վերահսկվում է Կենտրոնական բանկի կողմից

| | | |
|---|--------------------|-----------|
| Մասնաճյուղում ավանդի ներդրման դեպքում ավանդատուի համար բացվող խնայողական հաշվի սակագներ | | |
| Ավանդի արժույթով մեկ հաշվի | բացում | 0 ՀՀ դրամ |
| | տարեկան սպասարկում | 0 ՀՀ դրամ |
| Այլ պայմաններ՝ համաձայն Բանկի հաշիվների բացման և սպասարկման դրույթների: | | |

Հաշվարկման օրինակ

Հետևյալ պայմանների դեպքում՝

| | |
|-------------------------|---------------------------|
| Ավանդի սկզբնական գումար | 100,000 ՀՀ դրամ |
| Ավանդի ներդրման օր | 13/12/2021 |
| Ավանդի ներդրման ժամկետ | 5 տարի (մինչև 13/12/2026) |
| Տարեկան տոկոսադրույք | 11.86% |
| Տոկոսների վճարումը | Ժամկետի վերջում |
| Եկամտային հարկ | 10% տոկոսային եկամտից |
| Համալրում | Ամսական 10,000 ՀՀ դրամ |

Ավանդի տոկոսագումարի հաշվարկը կատարվում է հետևյալ կերպ՝

Մեկ օրվա տոկոսային եկամուտ՝ նախքան համալրումները

$100,000 \text{ (ներդրված գումար)} \times 11.86/100 \text{ (տարեկան տոկոսադրույք)} / 365 \text{ (տարվա օրերի քանակ)} = 32.49$

Մեկ օրվա տոկոսային եկամուտ՝ առաջին համալրումից հետո

$110,000 \text{ (ավանդի մնացորդ)} \times 11.86/100 \text{ (տարեկան տոկոսադրույք)} / 365 \text{ (տարվա օրերի քանակ)} = 35.74$

Մեկ օրվա տոկոսային եկամուտ՝ երկրորդ համալրումից հետո

$120,000 \text{ (ավանդի մնացորդ)} \times 11.86/100 \text{ (տարեկան տոկոսադրույք)} / 365 \text{ (տարվա օրերի քանակ)} = 38.99$

Մեկ օրվա տոկոսային եկամուտ՝ երրորդ համալրումից և տոկոսների կապիտալացումից հետո

$132,886.37 \text{ (ավանդի մնացորդ)} \times 11.86/100 \text{ (տարեկան տոկոսադրույք)} / 365 \text{ (տարվա օրերի քանակ)} = 43.18$

Եռամսյակը մեկ անգամ տոկոսային եկամուտը հաշվեգրվում է ավանդի մնացորդին:

Յուրաքանչյուր հերթական համալրումից և տոկոսների կապիտալացումից հետո մեկ օրվա տոկոսային եկամուտն աճում է:

Կուտակված տոկոսագումարները նախքան հարկումը՝ 284,187.71

Կուտակված տոկոսագումարները հարկումից հետո՝ 255,768.94

Համալրումների հանրագումարը՝ 590,000

Ավանդի բոնուսը նախքան հարկումը՝ 119,874.51

Ավանդի բոնուսը հարկումից հետո՝ 107,887.06

Ավանդի ընդհանուր գումարը (սկզբնական գումար + համալրումներ + տոկոսագումարներ հարկումից հետո + բոնուս հարկումից հետո)՝ 1,053,656.00 ՀՀ դրամ

Ավանդի հաշվիչ - <https://conversebank.am/hy/manukcalc>

Հաշվարկված գումարները կլորացվում են մինչև մեկ հարյուրերորդական:

Ավանդի տարեկան տոկոսային եկամտաբերության չափ

Ձեր հաշվում առկա միջոցների նկատմամբ տոկոսագումարները հաշվարկվում են անվանական տոկոսադրույքի հիման վրա, իսկ տարեկան տոկոսային եկամտաբերությունը ցույց է տալիս, թե որքան եկամուտ կստանայիք դուք, եթե ավանդի դիմաց ստացված տոկոսագումարները վերաներդնեիք ավանդի տեսքով:

Ավանդի տարեկան տոկոսային եկամտաբերության չափի հաշվարկման համար հիմք է ընդունվում ՀՀ ԿԲ «Բանկային ավանդների տարեկան տոկոսային եկամտաբերության հաշվարկումը» Կանոնակարգ 8/02-ով սահմանված հետևյալ բանաձևը՝

$$APY=(1+r/n)^n-1$$

որտեղ՝

- APY - տարեկան տոկոսային եկամտաբերությունն է.
- r - տարեկան պարզ տոկոսադրույքն է.
- n - մեկ տարվա ընթացքում տոկոսագումարների կապիտալացման հաճախականությունն է:

Ավանդի ընդունման ընդհանուր պայմաններ

1. Բանկի և ավանդատուի միջև կնքվում է ժամկետային ավանդի պայմանագիր:
2. Ավանդը ավանդատուի օգտին կարող է ներդնել ցանկացած ֆիզիկական անձ մինչև ավանդատուի չափահաս դառնալը՝ անկախ ավանդատուի տարիքից:
3. Պայմանագրի գործողության ընթացքում, ինչպես նաև գործողության ժամկետից հետո ավանդ ներդնող անձը ներդրված գումարից ելքագրումներ չի կարող կատարել, ինչպես նաև չի կարող հետ պահանջել ներդրված գումարը, բացառությամբ՝ եթե ավանդ ներդնող անձը հանդիսանում է մինչև 14 տարեկան ավանդատուի օրինական ներկայացուցիչը³:
4. Ավանդի գումարի տնօրինման իրավունքը մինչև պայմանագրի ժամկետի ավարտն իրականացնում է ավանդատուն կամ վերջինիս օրինական ներկայացուցիչը: Ավանդային հաշվից քաղվածքները և այլ պարտադիր ներկայացման տեղեկատվությունը տրամադրվում է միայն ավանդատուին կամ նրա օրինական ներկայացուցչին՝ ավանդային պայմանագրով ավանդ ներդրած անձի կողմից նշված՝ ավանդատուի կամ վերջինիս օրինական ներկայացուցչի հասցեով և եղանակով:
5. Ավանդի գործողության ընթացքում ավանդային հաշվին կարող է ավելացվել ցանկացած գումար առանց հաճախականության սահմանափակման:
6. Ավանդի գումարը պահանջվելու դեպքում այն վերադարձվում է Ավանդատուին կամ վերջինիս օրինական ներկայացուցչին:
7. Ավանդային հաշվին մուտքագրումներ կարող է կատարել ցանկացած անձ՝ հաշվի վերաբերյալ տվյալների առկայության դեպքում:

³ Որպես օրինական ներկայացուցիչ կարող են հանդես գալ միայն երեխայի ծնողները, որդեգրողները, խնամակալը (տասնչորս տարեկան չդարձած անչափահասների դեպքում) կամ հոգաբարձուն (տասնչորսից մինչև տասնութ տարեկան անչափահասների դեպքում):

Տոկոսների հաշվարկման և վճարման կարգ

1. Ավանդի գումարի վրա տոկոսները հաշվարկվում են ավանդային հաշվի փաստացի մնացորդի նկատմամբ՝ ավանդը Բանկ մուտք լինելու օրվանից մինչև այն ավանդատուին վերադարձնելու կամ ավանդատուի հաշվից այլ հիմքերով դուրս գրելու օրվան նախորդող օրը:
2. Բանկը տոկոսների հաշվարկը կատարում է պարզ տոկոսադրույքով՝ որպես բաժանարար հիմք ընդունելով տարին 365 կամ 366 օր նահանջ տարվա համար:
3. Տոկոսագումարը հաշվարկվում է օրական՝ հաշվին առկա մնացորդի նկատմամբ:
4. Ժամկետային ավանդը արտարժույթով ներդնելու դեպքում տոկոսագումարները ավանդատուին վճարվում են << դրամով՝ վճարման օրվա դրությամբ Բանկի կողմից սահմանված համապատասխան արժույթի առթի փոխարժեքով, կամ ավանդատուի ցանկությամբ այն արտարժույթով, որով ներգրավվել է ավանդը:
5. Ավանդի դիմաց հաշվարկված տոկոսները, որոնք ավանդատուն բանկային ավանդի պայմանագրում նշված ժամկետում չի ստացել, Բանկի կողմից վճարվում են ավանդատուի առաջին իսկ պահանջի դեպքում:
6. Պայմանագրի գործողության ժամկետի ավարտից հետո, եթե ավանդատուն չի պահանջում վճարել ավանդի գումարը և հաշվարկված տոկոսները, ապա պայմանագիրը համարվում է երկարաձգված Բանկում այդ պահին գործող ցպահանջ ավանդի համար սահմանված պայմաններով, եթե այլ բան սահմանված չէ հաճախորդի հետ կնքված ավանդային պայմանագրով կամ հաճախորդի այլ գրավոր հանձնարարականով:

Լրացուցիչ տեղեկատվություն

1. Ժամկետային ավանդային հաշվի բացումը և սպասարկումն անվճար է:
2. Ավանդային պայմանագրի գործողության ավարտից հետո ավանդային հաշիվը փակվում է:
3. Ավանդային հաշվով ընթացիկ բանկային գործառնություններ չեն կարող իրականացվել, բացառությամբ ավանդի ներգրավման և մարման գործառնությունների:

4. Մասնաճյուղում ավանդի ներգրավումն իրականացվում է ավանդի արժույթով խնայողական հաշվից, բացակայության դեպքում այն բացվում է առանց բացման և սպասարկման վճարի:
5. Ավանդի դիմաց հաշվարկված տոկոսները, ինչպես նաև ավանդային հաշվին մուտքագրված միջոցները ավանդատուին վճարելիս միջնորդավճար չի գանձվում:
6. Բանկ ներդրված ավանդի վերաբերյալ տեղեկատվությունը բանկային գաղտնիք է և Բանկը երաշխավորում է դրա գաղտնիությունը:

Ավանդային պայմանագրի վաղաժամկետ լուծում

1. Եթե ավանդատուն ցանկանում է վաղաժամկետ լուծել ավանդային պայմանագիրը, ապա ներկայացված դիմումի հիման վրա կատարվում է տոկոսի վերահաշվարկ հետևյալ պայմաններով.
 - Ավանդը ներդրման օրվանից մինչև 1 տարի ներառյալ ժամկետում դադարեցնելու դեպքում կատարվում է վերահաշվարկ՝ կիրառելով Բանկում այդ պահին գործող ցպահանջ ավանդի տոկոսադրույքը (ներկա պահին՝ 0.1%):
 - Ավանդը ներդրման օրվանից 1 տարուց ավելի ժամկետում դադարեցնելու դեպքում, կատարվում է տոկոսների վերահաշվարկ հետևյալ կերպ՝ դադարեցման օրվանից հաշվարկված նախորդ մեկ տարվա ընթացքում կուտակված և վճարված տոկոսների մասով կատարվում է վերահաշվարկ նախորդ ենթակետում նշված կարգով: Մինչ այդ (նախորդ մեկ տարին սկսելուն նախորդող տարվա վերջին օրը) հաշվարկված և հաշվեգրված տոկոսների մասով վերահաշվարկ չի կատարվում: Չի կատարվում նաև բոնուսի վճարում:
2. Եթե ավանդատուն լուծում է արտարժույթային ժամկետային ավանդի պայմանագիրը՝ անմիջապես նույն պայմաններով ՀՀ դրամով ժամկետային ավանդի պայմանագիր կնքելու պայմանով, ապա տոկոսների վերահաշվարկ չի կատարվում:

Բանկի հետ հաղորդակցման եղանակ

Դուք իրավունք ունեք հաղորդակցվել «Կոնվերս Բանկ» ՓԲԸ հետ Ձեր նախընտրած եղանակով՝ փոստային կապի միջոցով կամ էլեկտրոնային եղանակով: Էլեկտրոնային եղանակով տեղեկատվության ստացումն ամենահարմարավետն է՝ հասանելի է 24/7 ռեժիմով, զերծ է թղթային տեղեկատվության կորստի ռիսկից և ապահովում է գաղտնիություն:

Քաղվածքների և տեղեկանքների տրամադրման սակագներ

| Քաղվածքների տրամադրում՝ առձեռն՝ Բանկի տարածքում (ներառյալ ԱԱՀ) | |
|--|--|
| ✓ ՀՀ օրենսդրությամբ և/կամ պայմանագրով սահմանված պարբերականությամբ հաճախորդի նախընտրած եղանակով քաղվածքի տրամադրում՝ 0 ՀՀ դրամ | |
| ✓ ՀՀ օրենսդրությամբ և/կամ պայմանագրով սահմանված պարբերականությամբ էլեկտրոնային եղանակով տրամադրված քաղվածքների՝ հաճախորդի ցանկությամբ հավելյալ տրամադրում վերջինիս նախընտրելի եղանակով և նախընտրելի ժամանակահատվածի համար (յուրաքանչյուր ժամանակահատվածի համար մեկ անգամ)՝ 0 | |
| ✓ Նախորդ կետերում սահմանված պարբերականությունից բացի՝ | |
| - Մինչև 3 տարի վաղեմության՝ 1,000 ՀՀ դրամ | |
| - 3 տարի և ավելի վաղեմության՝ 3,000 ՀՀ դրամ (Բանկում պահպանված լինելու դեպքում) | |

| Տարբեր հաստատություններ ներկայացնելու համար տեղեկանքներ ¹ (ներառյալ ԱԱՀ) | |
|---|---------------|
| Մեկ ամսվա ընթացքում բացված ավանդների դեպքում ² | 5,000 ՀՀ դրամ |
| Ավելի վաղ բացված ավանդների դեպքում | 3,000 ՀՀ դրամ |
| Բանկի ինտերնետային կայքի միջոցով ներկայացված հայտի հիման վրա | 3,000 ՀՀ դրամ |

¹Նույն հաճախորդին տեղեկանքի և քաղվածքի միաժամանակյա տրամադրման և տեղեկանքի դիմաց գանձում նախատեսված լինելու դեպքում գանձումը կատարվում է միայն տեղեկանքի դիմաց:

²Մեկից ավելի գործող հաշիվ ունենալու պարագայում դիտարկվում է ավելի վաղ բացված հաշվի բացման ամսաթիվը՝ անկախ տեղեկանքում ներառվելու փաստից:

| Փաստաթղթերի, գործարքի կատարման հիմքերի և այլ տեղեկատվության պատճեններ (ներառյալ ԱԱՀ) | |
|--|--|
| Մինչև 1 ամիս վաղեմություն ունեցող | 1,800 ՀՀ դրամ յուրաքանչյուր փաստաթղթի համար |
| Մինչև 1 տարի վաղեմություն ունեցող | 3,000 ՀՀ դրամ յուրաքանչյուր փաստաթղթի համար |
| Մեկ տարուց ավելի վաղեմություն ունեցող | 12,000 ՀՀ դրամ յուրաքանչյուր փաստաթղթի համար |

Քաղվածքի առաքում փոստով (ներառյալ ԱԱՀ)

| | |
|----------------------|--|
| Ներհանրապետական և ԱՀ | 0 ՀՀ դրամ |
| Միջազգային | Օրենքով և պայմանագրով սահմանված լինելու դեպքում՝ առաքման ծառայությունը մատուցող կազմակերպության կողմից սահմանված սակագին Այլ դեպքերում՝ առաքման ծառայությունը մատուցող կազմակերպության կողմից սահմանված սակագին + 1,500 ՀՀ դրամ |

Քաղվածքի առաքում պատվիրակված առաքման ծառայության միջոցով (ներառյալ ԱԱՀ)

| | |
|----------------------|---|
| Ներհանրապետական և ԱՀ | 3,000 ՀՀ դրամ |
| Միջազգային | Առաքման ծառայությունը մատուցող կազմակերպության կողմից սահմանված սակագին + 3,000 ՀՀ դրամ |

Ուշադրություն

Ավանդային պայմանագրով որոշված տրոհումների չափը, որը հաճախորդը ներդրել է որոշակի ժամկետի ավարտից կամ պայմանագրով նախատեսված հանգամանքները վրա հասնելուց հետո այն հետ ստանալու պայմանով, Բանկը չի կարող միակողմանի նվազեցնել:

Բանկն իրավասու է փոփոխել և լրացնել մատուցվող լրացուցիչ ծառայությունների սակագները՝ պայմանագրով սահմանված կարգով ծանուցելով այդ մասին հաճախորդներին՝ սեփական ինտերնետային էջում (www.conversebank.am) հաղորդագրություն հրապարակելով, Բանկի տարածքում հայտարարություններ փակցնելու միջոցով, փոստով ծանուցումն առաքելու միջոցով և հաճախորդի կողմից ընտրված Բանկի կողմից առաջարկվող այլ եղանակներով տրամադրելու միջոցով, որը համարվում է Հաճախորդի պաշտոնական իրազեկում:

Բանկը, «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքով սահմանված հաճախորդի պաշտոնական ուսումնասիրության նպատակով կարող է սպառողից՝ «Ճանաչիր քո հաճախորդին» («Know your customer») սկզբունքի հիման վրա պահանջել լրացուցիչ փաստաթղթեր կամ այլ տեղեկություններ, ինչպես նաև բանավոր հաղորդակցման ընթացքում լրացուցիչ հարցեր տալ սպառողին:

Օտարերկրյա հաշիվների հարկային համապատասխանության ակտի (Foreign Account Tax Compliance Act (FATCA)) հիման վրա ԱՄՆ կառավարության հետ կնքած համաձայնագրի պայմաններին համապատասխան, Ձեր՝ ԱՄՆ հարկատու հանդիսանալու հանգամանքը պարզելու համար, Բանկը կարող է իրականացնել լրացուցիչ տեղեկատվության հավաքագրում:

Հաշիվը և դրանում եղած դրամական միջոցները տնօրինելու հաճախորդի իրավունքները կարող են սահմանափակվել դատարանի վճռով դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող մարմինների կամ հարկային մարմինների կամ օրենքով սահմանված կարգով այլ իրավասու մարմինների կողմից ներկայացված հայտի հիման վրա:

Առանց հաճախորդի կարգադրության հաշվից դրամական միջոցների բռնագանձումը կարող է իրականացվել դատարանի վճռով դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող մարմինների և հարկային մարմինների կողմից ներկայացված հայտի հիման վրա: Դրանք արտացոլվում են հաճախորդի բանկային հաշիվների քաղվածքներում, որոնք Բանկի և հաճախորդի միջև համաձայնեցված կարգով տրամադրվում են հաճախորդին:

Անհրաժեշտ փաստաթղթերի ցանկ

- Հաճախորդի և ավանդատուի անձը հաստատող փաստաթուղթ
- Հանրային ծառայությունների համարանիշ (ՀԾՀ) կամ տեղեկանք ՀԾՀ չստանալու վերաբերյալ (պահանջվում է միայն ՀՀ ռեզիդենտների և/կամ քաղաքացիների դեպքում): Չի պահանջվում, եթե հաճախորդը ներկայացնում է նույնականացման քարտ, որտեղ ամրագրված է ՀԾՀ

Բացի սահմանված փաստաթղթերից, ներդրվող ավանդի գումարը, ինչպես նաև նախկինում ներդրված գործող ավանդների և տվյալ պահին ներդրվող ավանդի հանրագումարը 5 մլն ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը գերազանցելու դեպքում հաճախորդից պահանջվում են նաև գումարի ծագման աղբյուրը հավաստող փաստաթղթեր և/կամ հայտարարագիր ֆինանսական միջոցների ծագման աղբյուրի վերաբերյալ:

Վերոնշյալ փաստաթղթերը չեն պահանջվում Բանկի հաշվետեր հաճախորդներից, որոնք իրավաբանական գործում առկա են պահանջվող փաստաթղթերը և ֆինանսական միջոցների ծագման աղբյուրը հավաստող հիմնավորումները:

Ներկայացված փաստաթղթերը հայերեն, անգլերեն կամ ռուսերեն լեզուներով չլինելու դեպքում պահանջվում է դրանց ապոստրիփացված կամ նոտարական վավերացմամբ թարգմանություն վերը նշված լեզուներով:

«Ձեր ֆինանսական տեղեկատուն»

«Ձեր ֆինանսական տեղեկատուն» ֆիզիկական անձանց առաջարկվող ծառայությունների որոնման, համեմատման և Ձեզ համար ամենարդյունավետ տարբերակի ընտրությունը հեշտացնող էլեկտրոնային համակարգ է՝ <https://www.fininfo.am/compare-deposit>:

Ծանուցում ավանդների հատուցման երաշխավորման պայմանների և կարգի մասին

Ձեր ավանդի հատուցման երաշխավորողն է Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամը (այսուհետև՝ Հիմնադրամ):

| Ավանդի արժույթային կառուցվածքը | Ավանդի երաշխավորման առավելագույն չափը |
|---|--|
| Եթե նույն բանկում ունեք միայն դրամային ավանդ | 16 միլիոն ՀՀ դրամ |
| Եթե նույն բանկում ունեք միայն արտարժույթային ավանդ | 7 միլիոն ՀՀ դրամ |
| Եթե նույն բանկում ունեք և ՀՀ դրամով, և արտարժույթով ավանդ | Եթե դրամային ավանդը 7 միլիոն դրամից ավելի է |
| | Եթե դրամային ավանդը 7 միլիոն դրամից պակաս է |
| | 16 միլիոն ՀՀ դրամ (երաշխավորվում է միայն դրամային ավանդը) |
| | 7 միլիոն ՀՀ դրամ (երաշխավորվում է դրամային ավանդն ամբողջությամբ և արտարժույթային ավանդը՝ 7 միլիոն դրամի և հատուցման ենթակա դրամային ավանդի տարբերության չափով) |

Հիմնադրամի գտնվելու վայրը՝ ք. Երևան, Խորենացի 15 («Էլիտ Պլազա» բիզնես կենտրոն)
Հեռախոս՝ +374 10 583514

Վեճերի և տարաձայնությունների լուծման կարգ

Հաճախորդի և Բանկի միջև ծագած ցանկացած վեճ և տարաձայնություն նախ և առաջ լուծվում է երկուստեք՝ փոխադարձ բանակցությունների միջոցով, իսկ համաձայնության չգալու դեպքում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված ինչպես դատական կարգով, այնպես էլ Ֆինանսական համակարգի հաշտարարի միջոցով:

Ծանուցում Ֆինանսական համակարգի հաշտարարի վերաբերյալ

Տեղեկացնում ենք, որ «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ «Կոնվերս Բանկ» ՓԲԸ կողմից Ձեզ մատուցվող ծառայությունների հետ կապված տասը միլիոն ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթով գումարը չգերազանցող գույքային պահանջի դեպքում ծագած վեճերն ու տարաձայնությունները կարող են լուծվել Ֆինանսական համակարգի հաշտարարի միջոցով:

Բանկի և Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակի միջև կնքված համաձայնագրի համաձայն՝ Բանկը հրաժարվում է Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից միայն այն գույքային պահանջների մասով, որոնց չափը չի գերազանցում 250,000 (երկու հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը, իսկ գործարքի գումարի չափը չի գերազանցում 500,000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը:

Հասցե՝ 0010 ք. Երևան, Մ. Խորենացու փող. 15,
«Էլիտ Պլազա» բիզնես կենտրոն 7-րդ հարկ
Էլ. փոստ՝ info@fsm.am
Հեռախոս՝ +37460 701111
Ֆաքս՝ +37410 582421

Կապ Բանկի հետ

Մանրամասների և հավելյալ տեղեկատվության համար կարող եք՝

- այցելել Բանկի <https://www.conversebank.am> ինտերնետային կայք
- այցելել Բանկի Գլխավոր գրասենյակի Հաճախորդների սպասարկման գրասենյակ կամ ցանկացած մասնաճյուղ
- զանգահարել +374 10 511211 հեռախոսահամարով
Viber՝ +374 95 511211
Skype՝ conversebank-callcenter